ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/38 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով համակարգչային տեխնիկայի /փաստաթղթերի ոչնչ. սարք, սկաներ/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.03.2022թ. ժամը 11:00-ին Էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Մարիամ Պողոսյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.
1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ
2	«Սմարթլայն» ՍՊԸ
3	«Այվենգո» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 ԷԱՃ-ի Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ		«Սմարթլայն» ՍՊԸ		«Այվենգո» ՍՊԸ	
		Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	180 000	130 000	130 000	145 500	174 600	250 000	300 000
2	700 000	616 000	616 000	-	-	623 100	747720

4. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

4.2 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1.2 իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3 կետում բացակայում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ մարտի 3-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 03.03.2022թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Մարիամ Պողոսյան

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

7. Տվյալներ մերժված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ին:

7.2 Մերժել «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը:

7.3 Հակադարձ աճուրդի արդյունքում «Այվենգո» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

8.Գնահատման արդյունքների մասին

8.1 Հաստատել 1-ին և 2-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արա Խաչատրյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Անուշ Մարգարյան /քարտուղար